



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

17.11.2022թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր Ուսանողության միջազգային օրն է, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ բոլոր ԲՈՒՀ-երի, քոլեջների և այլ կրթական հաստատություններում սովորող բոլոր ուսանողներին:

Լինել ուսանող, նշանակում է մշտապես գտնվել ռիթմի, շարժման, կատարելագործվելու, նոր գիտելիքներ ձեռքբերելու, աշխարհն այլ տեսանկյունից ընկալելու և զարգանալու փնտրտուքների մեջ:

Լինել ուսանող, նշանակում է անցնել փորձությունների, հետաքրքրությունների ճանապարհով, որը ի վերջո տանելու է հայրենիքի շենացմանն ուղղված որևէ ոլորտում ձեր ներդրումին:

Եվ, ի վերջո, ուսանողության օրերը նաև խենթ ու խելառ տարիների, լավ ու վատ օրերի, հիասթափությունների ու հնարավորությունների պահեր են, որոնք անմոռաց և չկրկնվող են ամբողջ կյանքի ընթացքում:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլոր ուսանողներին, մաղթում քաջ առողջություն և անկեղծորեն ցանկանում, որպեսզի ձեր ուսանողական տարիների ողջ ամբարած գիտելիքները անմնացորդ ու նվիրական սիրով ուղղեք մեր հայրենիքի զարգացմանն ու հզորացմանը:

Փառք ու պատիվ բոլոր պատերազմներում ընկած մեր ուսանող ընկերներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ